ՀՏԴ 371.31

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՀԵՌԱՀԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼՂՀ-ում

Վ.Վ.Առստամյան, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Մ.Ղ.Սահրադյան, ՀՊՄՀ ինֆորմատիկայի, հտ-ի և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ մ.գ.թ.,դոցենտ

Կրթության համակարգը դժվար է պատկերացնել առանց ինֆորմատիկայի, քանզի այն, որպես գիտության նոր ճյուղ, ուսումնասիրում է մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում ինֆորմացիայի որոնման, հավաքման, պահպանման, ձևափոխման և օգտագործման հետ կապված հարցերը, մեծ ազդեցություն է գործում ժամանակակից հասարակական կյանքի տնտեսագիտական, սոցիալական, գիտա-տեխնիկական և կուլտուրական ոլորտների վրա [1]:

Չնայած տարածաշրջանի անկայուն վիճակին, պետք է նշել, որ ԼՂՀ-ն ևս անմասն չի մնացել հասարակության տեղեկատվական (ինֆորմատացման) գործընթացից: Սակայն հասարակության իրազեկվածությունը (ինֆորմատացումը), մեր կարծիքով, պետք է սկսել կրթության համակարգի դիրքորոշման վերափոխումից:

Ներկայումս ԼՂՀ-ում (ԱՊՀ-ի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնում) մեր կողմից մշակվում է ինֆորմատիկայի հեռահար ուսուցման համակարգ, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները (նկատի է առնվում տարածաշրջանի սնկայունությունը, հանրապետության և այլ պետությունների միջև հաղորդակցական կապի բացակայությունը՝ բացի Հայաստանից), որը բացասաբար է անդրադառնում հեռահար ուսուցման համակարգի ներմուծման գործընթացի վրա:

Արցախ աշխարհի համար հեռահար ուսուցումը ունի մեծ նշանակություն, քանի որ այն հանդիսանում է գյուղատնտեսական երկիր, որտեղ ուսանողների ու աշակերտների հիմնական մասը հանդիսանում են գյուղական վայրերի բնակիչներ և նպատակահարմար է սկսել հեռահար ուսուցման գործընթաց:

Դա բխում է նաև հետևյալ ենթադրություններից.

-հնարավորություն ունենալ ստանալու քոմփյութերային գրագիտություն առանց կտրվելու հիմնական գործից.

-գյուղական վայրերի ապահովումը ինֆորմացիայի աղբյուրներով.

-ուսուցման գործընթացում ընձեռնել հնարավորություն կատարելու ուսումնական առարկային վերաբերվող նյութերի ընտրություն:

Հեռահար ուսուցման զարգացման հեռանկարները սերտորեն կապված են ինֆորմատիկայի, որպես գիտության, վերջին հաջողությունների հետ [2]:

Կրթական համակարգի անցման համար ԼՂՀ-ում որպես հիմնական ուղղություն, նախատեսվում է հետևյալը.

- կապի հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ներդրում՝ միջազգային և տեղական ցանցերում.

-առաջատար տեխնոլոգիաների օգտագործում տարբեր առարկաների ուսուցման գործընթացում.

-կրթության համակարգի դիտում, որպես չընդհատվող՝անընդհատ գործընթաց:

Վերջին ժամանակներս Հարաբաղում կատարվում է միջազգային ցանցի (INTERNET) ներդրման այագացված գործընթաց, որը կնպաստի իրազեկված հասարակարգի անցմանը:

Արցախի պետական համալսարանի ուսանողները (առկա) արդեն լայն հնարավորություն ունեն (պարապմունքներից հետո) համակարգչային դասասենյակներում օգտագործելու միջազգային ցանցի հնարավորությունները: Բոլոր ուսանողներին հնարավորություն է ընձեռնված ստեղծելու սեփական էլեկտրոնային հասցեներ (E-mail) ցանցում աշխատելու համար:

Հեռահար ուսուցման համակարգում մեծ նշանակություն ունի տեղեկատվական տեխնոլոգիան և ինֆորմատիկայի միջոցները՝ գրաֆիկական և տեքստային խմբագրիչներ, տվյալների բազայի կառավարման միջոցները, հիպերտեքստերը, մուլտիմեդիա-տեխնոլոգիաները, էքսպերտ համակարգերը և այլն:

Հեռահար ուսուցման համակարգի ուսումնական նյութը դասակարգվել է ըստ մակարդակների [3].

Առաջին մակարդակը իր մեջ ընդգրկում է սովորական տեքստեր, որոնք ընդգծվում են հարցումներով:

Երկրորդ մակարդակի նյութերը դա աուդիո-վիդեոկոնֆերանսներն են, երկչափ գրաֆիկան, որոնք ունեն լայն հնարավորություն ուսումնական պրոցեսի արդյունավետության բարձրացման մեջ:

Երրորդ մակարդակի ուսումնական նյութերը դա մուլտի-մեդիա տեխնոլոգիաների օգտագործումն է:Այստեղ նկատի է առնվում եռաչափ համակարգչային գրաֆիկան, ձայնային ցուցադրական գործընթացները, արտապատկերման դինամիկան և, վերջապես, իրականության հնարավոր (վիրտուալ) ինտերֆեյսը (պատկերը), որը հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը դարձնել ավելի դիտողական: Մեր կարծիքով ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաների հարաճուն զարգացումը և ուսումնական պրոցեսում ընդգրկելը պահանջում է նոր մոտեցումներ նշված մակարդակներում:

Ուստի առավել կարևոր է մշակել հեռահար ուսուցման նոր համակարգ, ուր պետք է նախատեսվի ինֆորմատիկայի ուսուցումը տեղափոխել դպրոցի ավելի ցածր օղակներ: Լաբորատոր, ինքնուրույն աշխատանքներով նպաստել սովորողների մտավոր հետազոտական աշխատանքների հմտությունների զարգացմանը, ինչպիսիք են սեփական աշխատանքը պլանավորելը, խելամտորեն այն կատարելը, աշխատանքի սկզբնական պլանը կատարման ռեալ ընթացքին հետևելը, արդյունքների վերլուծությունը: Բնական է, նկատի ունենալ.

-համաշխարհային INTERNET ցանցը, WWW-սերվերները և կոմունիկացիայի այլ հնարավորություններ.

-ուսումնական դասընթացների էլեկտրոնային գրադարանները.

- ֆինանսական միջոցների առկայությունը՝ կախված քաղաքական գործոնից:

Մեր կողմից առաջ քաշված հարցերը, ինչ խոսք, չեն սպառում այն հիմնահարցերի պատասխանները,որոնք առկա են Արցախ աշխարհում կապված մեծ նշանակություն ունեցող հեռահար ուսուցման գործի կազմակերպման հետ:

Ամփոփում

Հոդվածում դիտարկվում են ԼՂՀ-ում ինֆորմատիկայի դասավանդման և նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրման ոլորտում կապված դրսևորումները:

Հեռահար ուսուցման համակարգի հիմնահարցը նշված է այն ուղղություններ ենթատեքստում, որոնք ներկայանում են որպես ուսանողների, գյուղական վայրերի դպրոցականների ուսուցման հետ կապված հիմնական տենդենցներ:

Резюме

В статье рассматриваются основные вопросы, связанные с внедрением новых информационных технологий и углубленным преподаванием информатики в НКР, которые предоставляют возможность перехода к информационному обществу.

Вопрос о системе дистанционного образования изучается в контексте тех направлений, которые являются основными тенденциями в обучении студентов и школьников сельских местностей.

Գրականություն

1. Колин К.К.,Опережающее образование и проблемы информатики.1996.-N2.

2.Тихонов А.Н.,ИванниковА.Д., Информатизация российского образования и общества в целом.1997.- N4.

3.Латыпов Р., Интернет: к новому типу образования. 1997.-N3.